88. ՓԱՐԻ

Ըլլում ա չի ըլում մի մարթ, մի կընիկ։ Տհանց ըլում ա մի տղա, մի աղճիկ։ Էտ մարթը մի օր քյընում ա բաղար, տեսնում, վեր մի խեղճ տղա, ճըղրտոտված շըրեբով ըտեղ նստած ա։ Ասում ա.

— Ա՛յ տղա, հի՞նչ ունես, հի՞նչ չունես։

— Հայրի՛կ,—ասում ա,—ինձ վեչինչ չունեմ։

— Ինձ ունեմ էրկու բրախա, տու էլ կըլես իրեքը,—ասում ա հու սրանց վեր ունում, պիրում տուն։ Էս մարթի ըղճկա անումը ըլում ա Փարի, տղինը՝ Սամվելիկ։ Էս պիրած տղի անումն էլ տընում ա Թափտըղ, այսինքն՝ քթված։

Էս ըրախեքը, վեր մըծանում են, մի օր սրանց հերն ու մերը քընում են ուխտ։ Սրանց հրևան մի չար պառավ ա ըլում։ Կյալիս ա տրանց տուն Փարի ընգաճին փըսփըսում, ասում ա. «Ա՛յ Փարի, խի՞ չես քյընում Թափտըղին։ Տա՝ քու ախպերը չի։ Լավ էլ բոյով-բուսաթով տղա յա»։ Էդ աղճիկը ասում ա. «Այ քավթառ, հնչի՞ ես տու էտ խոսքը ինձ ասում, վե՞նց կարելի ա քիրը ախպորը քյը՛նա»։ Պառավը տեսնում ա, վեր չի կարում ըղճկանը ճմպից հանի, մըկէլ նրանից թաքուն կյալիս ա Թափտըղի կուշտը, սկսում նրա՝ ընգաճին փըսփըսալը. «Այ Թափտըղ, խի՞ չես Փարիին ուղում։ Տու նրա հալալ ախպերը չես, տու՝ քըթված ես, տրա՝ համար էլ անումտ տրել են Թափտըղ»։

Էս պըռավի խոսքից ետը, էս տղեն էս ըղճկանը յախալամիշ

ա անում, ասում. «Քեզ ուզում եմ»։ Էս Փարին, հենց տալիս ա տղի կրլոխը ասպակ ա ըլում։ Ասում ա. «Եթե տու իմ ախպերը ըլեիր, էտ խոսքը ինձ ասիլ չէիր, հեռացի մեր տնից»։

Թափտըղը արին տալով քընում ա պռավի կուշտը։

— Ա՛յ պառավ,— ասում ա,— էս հի՞նչ տրիր իմ կըլխիս, քիրս կըլոխըս տասպակ ըրավ, վեր իմ հերը, մերը կյան, ես հի՞նչ կասեմ։

— Տղա՛ ջան,— ասում ա պառավը,— տու կասես, վեր ծեր բյընալից ետը, Փարին ճընպից տուրս էր եկել. վատ շրջան էր ընդել, ես կրլխու ընգա, ուզեցի էտ շրջանից հանեմ, նրա սրեկաննիրը տվին կրլոխս տասպակ ըրին։

Հերն ու մերը կյալիս են, տեսնում Թափտըղի կըլոխը տասպակ ըրած։ Թափարդը ասում ա. «Ա՛յ հեր, ա՛յ մեր, ծեր աղճիկը իրա շրջանը փոխել ա, սրեկաննիրը եկան տուն, դաթ ընգա, տվին կրլոխս տասպակ ըրին»։

Հերը կանչում ա հալալ տղին՝ Սամվելիկին, ասում. «Վեր Փարին տեղ հիմարութուն ա ըրել, ես նամուսով մարթ եմ, տա՛ իմ նամուսը վեր չի ունի, կըքյնա՛ս քըվորտ կտանես մի հեռու տեղ կրստանես, առնոտ շորերն էլ կըպիրես»։

— Աչքիս վրա՛,— ասում ա Սամվելիկը։ Քյընում ա քվոր կուշտ ասում. «Ա՛յ քիր, մամեն բաղից կյալի վախտը ճըմպին ուշաթափվել ա, վեր ընդել, հմի քեզ ա ուզում տեսնի»։

Փարիի սիրտը մեկրտում ա, վեր ա կենում ախպոր ետնիցը վազ տալի։ Ախպերը քվորը դյուզից հանում ա, տանում ճանապարհից դրաղ քաշում, քիրն ասում ա. «Ա՛յ ախպեր, էս հո՞ւր ենք բրնում։ Ստ մեր բաղի ճամպեն չի, ըստեղ իմ մերը հի՞նչ ա անում»։

Ախպերը ասում ա. «Ծենտ կըտրի, հմի քու վերչն ա», խանչալը հանում ա, մի քանի տեղից քըվորը ծըկծկոտում, առնոտ շորերը պրտատում, առնում, կյալիս տուն։

Թող Սամվելիկը քվոր առնոտ շորերը տանի, խոսանք ըղճըկանիցը։

Էս աղճիկը արին տալով քյընում ա, հըսնում մի ախպրի։ Ինքը իրան մտածում ա, վեր յարալուն ճիր խմի շուտ կըմահանա։ Ճիր ա խմում, պայց չի մահանում։ Սպասում ա, վեր մութը ընգնում ա, ղրրցրանում ա ծառը։ Էտ քըշեր մի թաքավեր մի արաղ ա տեսնում։ Ըռալետը վեր ա կենում, կանչում իրա նաղիր-վազիրին, ասում. «Էս քըշեր մի արաղ եմ տեսել, ե՞կ քընանք հորսի, հինչ ըրթանանր, պիրենք, կես անենք»։

Սրանք հաքնում են հորսորթական շորերը, նստում ծիերը հու ճամպա ընդնում։ Շատ են ման կյալի, քիչ են ման կյալի, վեչինչ չեն քրթանում։ Թաքավերը վազիրին ասում ա. «Էս սամթեքումը մի ախպուր կա, եկ քընանք ճուր խմենք»։ Արևը տված ա ըլում, ըղճկա շոխքը ախպուրի մեչ ա ընգած ըլում։ Թաքավերի ծին խորթնում ա։ Թաքավերը դես ա յաշում, դեն ա յաշում, տեսնում ա, վեր ծառի վրա մի տկլոր աղճիկ կա։ Թաքավերն ու իրա նազիր-վազիրը ծիերիցը վեր են կալի։ Թաքավերը ասում ա. «Եթե աղճիկ ես, ծառիցը քըշացի, եթե հրեշտակ ես, անհայտացի»։ Աղճիկը պատասխանում ա. «Ես աղճիկ եմ, տկլոր, խնթրում եմ մի շոր տաք, շուտ ունեմ, վեր կամ»։

Թաքավերը յաշում ա, տեսնում ծառը սաղ արին ա։ Հասկանում ա, վեր աղճիկը յարալու ա, յափընչին տնում ա մի փետի ծերի, պըցրցնում, տալիս ըղճկանը հու վազիրի հետ ղրաղ քաշվում։ Աղճիկը վեր ա կալի, թաքավերը կյալիս, տրան տնում ա թարքյին յալլա՜, տանում տուն։ Պալատումը յաշում ա տեսնում, վեր շատ սուրուն աղճիկ ա, տուրն ա կյալիս, որոշում ա արա հետ փսակվել։

Ժամանակ ա անց կենում, տրանց ըլում ա էրկու տղա։ Ժամանակի ընթացքում էտ ըրախեքը մըծանում են, դպրոց քյնում։ Ըստեղ տրանք լսում են, վեր իրանց հնգերները ասում են. «Իմ տատը, իմ պապը, իմ դային, իմ ամին», հու ըսկսում են մտածել, թա. «Խի մենք մի պան էլա չունենք»։ Կյալիս են տուն իրանց մորը ասում. «Ա՜յ մեր, ոչ տատ ունենք, ո՜չ պապ, ո՜չ դայի, ո՜չ ամի, բա մերունքը հո՞ւր են»։ Մերը ոչինչ չի պատասխանում, սիրտը նըղանում ա, սկսում ա լաց ըլիլը։ Հենց էտ ժամանակ թաքավերը տուն ա մտնում, տեսնում, վեր կընիկը լաց ա ըլում, ասում ա. «Ա՜յ կընիկ, խի՞ ես լաց ըլում»։ Կընիկը պատասխանում ա. «Բա վե՞նց լաց չըլեմ, քանի տարվա մրթըկնիկ ենք, տու մհետ հրցրիր վեչ, թա տու մա՞րթ ես, բո՞ւյս ես. տու հնչի՞ց ես, վեր էն ծառի վրա իր։ Ջէ՞ վեր ինձ էլ ծնող ունեմ. ինձ էլ մեր ա պիրել։ Հմի ծնողներս միտս են ընգել, տրա համար եմ լաց ըլում»։ Թաքավերը ասում ա. «Ծնողներտ միտտ են ընդել, քյրնանք տեսություն, տա հինչ մի դժվար պան ա, վեր տրա համար լաց ես ըլում»։

Թաքավերը իսկույն կանչում ա իրան նազիր-վազիրին, կանչում ա փայտոնչուն ասում. «Կարա՞ք իմ կընգանը նան ըրեխեքին տանեք հերանց»։ Վազիրը ասում ա. «Աչքիս վրա, հնչի չեմ տանի, տու հրաման տաս, հու ես չկատարե՞մ»։ Մինչև տրանց փայտոն

նսաիլը թաքավնրը ասում ա, վեր էս հինչ տեղը ղաշաղի պուն ա, ընդեղ փայտոնը չըկղնցնեք, կըքշեք, կըքյնա̈ք։ Վա̈զիրն ասում ա. «լա̈վ», հու ճամպա են ընդնում։

Քնում են, հըսնում հենց էն տեղը, վերղեղ թաքավերը ասել ա, վեր չըկաղնեք։ Վա̈զիրը փայտոնչուն հրամայում ա, փայտոնը կաղնում ա, էտ հարսը ծըվծվում ա, ասում. «Հնչի ես տու ըստեղ փայտոնը կըղնըցնում, չէ՞ վեր թաքավերը ասել ա, վեր ըստեղ չըկաղնեք»։ Վաղիրը պատասխանում ա. «Թաքավերը իրան տեղն էր թաքավեր, ըստեղ տերը ես եմ։ Էն օրը վեր մենք քեզ քըթա̈նք, մենք պայման ինք կապել հինչ քըթա̈նանք կես անենք։ Մինչև այժմ թաքավերի կընիկն ես ըլել, հմի էլ կեսու յա, իմ կնիկը պետք ա ըլես»։ Փա̈րին պատասխանում ա. «Տու վըղա̈տա̈կտ կըտեսնաս, ամմա էտ պա̈նը չես տեսնալ»։ Վա̈զիրը ասում ա. «Դե վեր ըտհենց ա, հմի ես քու ըրախանցը կըմորթեմ»։ Փա̈րին ասում ա. «Մո՛րթի, տըրա̈ն էլ եմ հոժար, ամմա քու ըսածին հոժար չեմ»։ Էս վազիրը խանչալը հանում ա ըրախանցը մորթում։ Փա̈րին խելքը կըրցնում ա.

— Հը՞, հմի հի՞նչ կասես,—ասում ա վա̈զիրը։

Փարին ասում ա. «Վեչ մի պա̈ն, մենակ խնթրում եմ թույլ տաս չոլ տուս կյամ, կկյա̈մ քունն եմ»։ Էս վա̈զիրը քա̈նդիրը կապում ա էտ հարսի կըռնիցը։ Էտ հարսը էնքան քյընում ա՝ մինչալ քա̈նդիրը ծիք ա առնում։ Տեսնալով վեր էլ քյընա̈լի տեղ չըկա, քա̈նդիրը կըռնիցը ետ ա անում, կապում մի կուճուր քյոթիկից, իրան վըրենի չարսավը վեր ունում քցում էտ քոթիկի վրա հու փախչում։ Էս վա̈զիրը շատ ա յա̈շում, քիչ ա յա̈շում, տեսնում ա վեր հարսը չի կա̈լի, քա̈նդիրը քաշում ա, տեսնում վեր էն ղաշանգ հարսի տեղը մի փթա̈ծ քյոթիկ ա կա̈լի։

Վա̈զիրը մտածում ա հի՞նչ անի։ Վեր ա կենում փայտոնչուն սպանում մեիդը քցում ծըրի մեչ, էտ մորթած ըրեխեքը տնում փայտոնի միչին ետ-ղըրետ։ Կյա̈լիս հըսնում ա պալատը, թաքավերին ասում. «Բա չես ասի՝ ճանապարհին ղաշաղները վրա̈ տվին, փայտոնչուն հու ըրեխեքիտ սպանեցին, կընգա̈նտ տարան։ Հազիվ կարողացա կըլթխս ըզատել, ըրխանց մեիդները վերցնել հու պիրել»։ Թաքավերը շատ ա տխրում, լա̈ց ա ըլում, վերչը վա̈զիրին ասում ա. «Ե՛կ, ես ու տու աշուղ տա̈ռնա̈նք, սար ու ծոր ընգնենք, ման կյա̈նք իմ կընգա̈նը քըթա̈նա̈նք»։ Վա̈զիրը համաձայնում ա։ Ամեքը մի սազ են վեր ունում, ճամպա ընգնում։

Թող արա̈նք ճամպա քյրնա̈ն, խա̈բա̈րը տանք ըղճկանիցը։

Էս Փա̈րին սըրըսար, չըլըշուլ կյա̈լիս, հըսնում ա իրա հոր չո-

բանին։ Իրար տեսնում են, իրար համփուրում, իրար աղի պես լո̈ւզ տալի։

— Ես քեզ մատաղ, ա՛յ իմ չոբան ախպեր, էս վերըղըղի՞ց քեզ քըթա̈,— ասում ա Փա̈րին հու նստում իրա կըլխո̈վը անցկըցածը պատմում։

Էս չոբան ախպերը վեր ա կենում մի վեչխար մորթում, խորոված անում, վենց վեր քիր ու ախպեր, կյա̈լիս տուն։

Չոբանի մերը Փարուն տեսնում ա, ճըննաչում։

— Փա̈րի, քեզ մատաղ,— ասում ա չոբանի մերը,— էտ վերըղըղի՞ց տո̈ւրս եկար, էտ վե՞ր աշխարից եկար։

Չոբանը ասում ա.— Ա՛յ մեր, էլ Փա̈րի անունը չտաս. սուսփուս մնա, ոչ ոք չըգիդա̈, վեր նա̈ ըստեղ ա։

Չոբանը նստում ա էտ օրվա մորթած վըչխարի մորթիցը Փա̈րի հետի մի փափաղ ա կարում, իրա հին շորերը տրա հաքցնում, տղի անունն էլ տալիս հու ասում.— Ըռավետը քըշերով վեր կըկենաս, կամանց դըրա̈ ծեր տունը կըքյնա̈ս, մերտ տըռա̈նը կըլի, կըտեսնաս։

Ըռավետը քըշերով էս Փա̈րին վեր ա կենում, չոբանի հին շորերը կենում, փափաղը տնում, տանիցը տուս կյա̈լիս։ Ըխպրի կշտովը անցկընալի վախտը յա̈շո̈ւմ ա, տեսնում, վեր իրա մերը ճո̈ւր ա լըցնում։ Մականում ա։ Մերը տեսնում ա, վեր էտ չոբանի դեմքը իսկական իրա ըղճկա դեմքն ա, ամմա պա̈ն չի կըլխի ընգնո̈ւմ։ Նրա̈ կեցի տղի շորերը նրա̈ն չաշմիշ են անում։

Փա̈րին կյա̈լիս ա իրանց տուն, մերն էլ իրանցը։

— Վա՛յ,— ասում ա մերը,— հինչ երանի կըլեր, վեր էն տղեն աղճիկ ըլեր, ես նրա̈ն իմ մեռած ըղճկա տեղը եր կունեի։

Մարթը ասում ա. «Ա՛յ կնիկ, էտ հի՞նչ ես տո̈ւ ու տո̈ւ խոսում»։ Կնիկը ասում ա. «Ա՛յ մարթ, բա վե՞նց չխոսամ։ Ըսօր մի տղա եմ տեսել պըտատած մեր Փա̈րին էր քիչ ա մնում խելքս կըրցնեմ։ Այ մարթ,— ասում ա,— եթե տո̈ւ նրա̈ն տեսնաս խելքտ կըթըռցնես։ Ե՛ք, ըռավետը քընա̈նք ախպո̈ւրը բա̈լքա̈մ մի տեղից տո̈ւս կըկա̈, կըտեսնաս»։

Ըռավետը քըշերավ, մարթ ու կնիկ, վեր են կենում կյա̈լիս ախպո̈ւրը։ Ծանապարհին կնիկը մարթին ասում ա. «Ա՛յ մարթ, ես վեչ մի պա̈ն չեմ ուզում, ըշխարքումը էլ ինձ դա̈րդ չի ըլի, եթե էտ տղեն մեր տանը ապրի։ Ըրևում ա, վեր ղարիբ տղա յա։ Ման կյա̈նք տեսնանք հո՞ւմ տանն ա ապրում մեր կարողությունը ծախենք, նրա̈ն առնենք»։

Մարթ ու կնիկ ըսհենց խըսալով կյա̈լիս, հըսնում են ախպուրի կըլոխը։ Կա̈ղնում են, տեսնում էնա էն տղեն կյա̈լիս ա։

Մարթը ասում ա. «Ա՛ կնիկ, ես մեծ մեխք եմ ըրել, ես քու ուչքի լիսին մատաղ, իսկապես վեր էտ տղեն մեր ըղճկանը նման ա, ափսոս, վեր աղճիկ չի»։ Տղեն մոտկանում ա։ Մարթը հըրցնում ա. «Տղա՛ ջան, վերդըղացի ես»։ Զոբանի շորեր հաքած Փա̈րին պատասխանում ա. «Հե՛ր ջան, օտար եմ, շատ հեռու տեղից եմ էկել»։ Հերը ասում ա. «Կարելի ա, վեր տու̄ք կյա̈ք մեր տուն. տա̈ռնաք մեր ժառանգը»։ Փա̈րին պատասխանում ա, վեր ես էս ֆլան պըռավի ղոնաղն եմ, էկեք խնթրեցեք, վեր պառավն ու տղեն հա̄մող ըլեն, ես էլ համող կըլեմ։

Մարթն ու կընիկը թող իրանց տուն քյըլնա̈ն, Փա̈րին էլ՝ չոբանի տունը։

Պառավը հարց ա տալի. «Փա̈րի ջան, բալա ջան, քեղ հետ հի՞նչ պըդահեց, հընչի՞ ուշացար»։ Փա̈րին ասում ա. «Իմ հերն ու մերը ինձ պըղհեցին։ Ուզում են, վեր ես քընա̈մ իրանց տունը ապրեմ։ Էս ըրու̈գու նրա̈նք կյա̈լու են քու կուշտը։ Վեր կյա̈ն, խնթրում եմ համաձայնվես»։ Պառավը պատասխանում ա. «Շատ լա̈վ, թող քու ախպերը կյա̈, հինչ կասի, ընհենց կանենք»։

Օրը մթնում ա, չոբան ախպերը կյա̈լիս ա տուն։ Փա̈րին նըստում ա ամեն հինչ պաղմում։ Զոբանը ասում ա. «Շա՛տ լա̈վ, շա՛տ պարի, ես դեմ չեմ, վեր կյա̈ն՝ կըտամ, կըքյնա̈ս, պայմանով, վեր ամեն օր պետք ա կյա̈ս մեր տանը մազերըտ սանդրես։ Մի խոսքով, քեղ ընհենց պա̈հես, վեր նրա̈նք կըլխի չընգնեն, վեր տու̈ աղճիկ ես»։

Ըրու̈գու̈նը ըղճկա իսկական հերն ու մերը կյա̈լիս են չոբանի տուն։ Մերը ասում ա. «Զոբան բալա, քեզ հի՞նչ տանք, վեր էս տղին մեզ տաս։ Նա̈ մեր մեռած ըղճկանը շատ ա նման»։ Զոբանը պատասխանում ա. «Վեչ մի պա̈ն էլ պետքը չի։ Կըտամ, մենակ մի պայմանով, վեր նրա կողքովը անցկենող չըլի։ Նա̈ իմ ախպերն ա։ Եթե մինը նրա̈ քեփին նի կյա̈, իմ ձեռքից պրծնիլ չի, էս կոպալովը կըլո̄խը կըճարթեմ»։

Մերն ուրախանում ա, մարթի հետ տղին վեր ունում, կյա̈լիս տուն։ Կանչում ա Սամվելիկին հու Թափտըղին ասում. «Սամվելիկ հու Թափտըղ, շատ խնթրում եմ, վեր տու̄ք էս տղի քեփին նի չկյա̈ք։ Սա̈ ծեր ախպերն ա, ախպեր պտի հաշվեք»։

Ըսհենց էս Փա̈րին յոթ տարի տղի շորերում րստեղ ապրում ա։ Մի օր էլ սա̈ քյըլնո̄ւմ ա շընա̈մեշը տեսնում, վեր էրկու աշուղ մի

քարի նստած խոսում են։ Մեռաց կըլխի ա ընդնում, վեր մինը իրա մարթն ա, մինն էլ իրա ըրխերանցը մորթող վաղիրը։

Վազ ա տալիս, կյալիս տուն, մորը ասում. «Օխտը տարի ա, վեր ես ծեր տանն եմ, էտ օխտը տարվա մեջ ես ծըզանից պան չեմ խնթրել, հմի ուզում եմ խնթրել։ Ըսօր շնամեչումը էրկու աշուղ եմ տեսել, ուզում եմ էտ աշուղներին մեր տուն հրավիրեմ։ Ըրևում ա, վեր նրանք աշխար տեսած մարթիք են։ Կըկյան դամ ու դում կանեն, մենք էլ լազաթ կըտեսնանք»։ Մերը ասում ա. «Շատ լավ, թող քու ասածը ըլի»։ Փարին վռազ քյընում ա շընամեչը։ Էն աշուղներին հետիցը քըցում, պիրում տուն։

Մթնում ա։ Զորանը տուն ա կյալիս։ Փարին սրան ղրաղ ա քաշում, հասկացնում, վեր էտ աշուղներից մինը իրա մարթն ա, մինն էլ իրա ըրխերանցը մորթող վաղիրը։

Զորանը ասում ա. «Փարի շան, արխալին կաց, էս ըրուզու հերթը իմն ա, հինչ պետքն ա, էն էլ կանեմ»։ Ըրուդունը մարթիք հվաքվում են։ Զորանը կոպալը ծեռին, կյալիս կաղնում ա նրանց մեչտեղը ասում. «Այ ժողովուրթ, էս ըրուզու, էս աշուղները ըստեղ մարաքա էն ընըլական։ Հով միտք ունի մինչև վերչը մնա, կարող ա տեղ փռնի, հով միտք չունի, կարող ա հենց հմի քյընա»,—ասում ա չոբանը, տուռը ծածկում, կոպալը ձեռքին տռան տակին նստում։

Մարաքեն սկսվում ա։ Թաքավերը սազը վեր ա ունում, սկսում երքիլը։ Երքով նա պատմում ա իրա կըլխով անցկըցածը, խընթրում ա, վեր հով իրա կընգանիցը մի խաբար ունի, ասի։

Փարին մտկանում ա թաքավերին սազը ծեռիցը վեր ունում հու երքում.

Ինձ դաղ ու դաղ քըցողը
Տա յա կողքիտ նստողը։

Վազիրը տեղից վեր ա կենում, վեր փախչի։ Զորանը ասում ա. «Քնա՛ տեղտ նստի, փորց չանես տուս կյաս, վեր տուս կյաս էս կոպալով կրլոխտ օխտը կես եմ ընըլական»։

Վազիրը ետդըբեդ քյընում ա տեղը նստում։ Փարին երքում ա.

Ա՛յ իմ արթար, մայրի՛կ շան,
Կաթըդ արթար, մայրի՛կ շան,
Օխտը տարին անց կըցավ,
Ինձ չիմացար, մայրիկ շան։

Մերը տեղիցը վեր ա թռչում, Փարին շարունակում ա.

Ինձ դաղ ու դաշ քըցողը,
Տա յա կողքիդ նստողը,
Հարամ ղադա թափտըղը
Ջար պրռավին լըսողը։

Լղճկա հոր ու մոր ուշքը քնում ա։ Տրանց ուշքի են պիրում։

Ջորանը մարթկանց միչից տուս ա հանում թափտըղին, վապիրին հու չար պըռավին, կըղնցնում մի ղոլի։ Ասում ա. «Քնացեք իրեր խամ ծի պիրեք»։

Իրեր խամ ծին պիրում են, իրեք քանդիր հետը։ Քանդիրները քրցում ա տրանց վիզը, կապում ծիերից։ Ծիերը առնում են բյրնում։ Ամեն մնի մեծ պատառը անդաճն ա մնում։ Թաքավերը իրա կրնդանը վեր ա ունում քյրնում։

Նրանը հրսնեն իրանց մուրազին, մենք էլ հրսնենք մեր մուրազին։